ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 27-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1495-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ և ուժի մեջ մտնելու կապակցությամբ հետաքննական լիազորությունների փոփոխություններով պայմանավորված, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու,

գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման պահանջների կատարման նկատմամբ ներգերատեսչական հսկողության (այսուհետ՝ Ներգերատեսչական հսկողություն) կարգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հանցագործությունների մասին վերացական բնույթի հաղորդումների գրանցման աշխատանքային մատյանի (այսուհետ՝ Աշխատանքային մատյան) ձևը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրության ձևի, հաղորդումները ոստիկանության ծառայողի կողմից ապօրինաբար չընդունելու իրավական հետևանքների, դրանք գրանցելու և ստուգելու կարգի և ժամկետների, Ներգերատեսչական հսկողություն իրականացնող վերադաս ստորաբաժանման, հսկող դատախազի հեռախոսահամարների (աշխատանքային) մասին տեղեկությունների ձևը՝ համաձայն հավելված 3-ի.

4) ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների, ինչպես նաև քրեական ոստիկանության գլխավոր վարչության, պարեկային ծառայության, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետև՝ Իրավասու ստորաբաժանումներ) կողմից ՀՀ ոստիկանության շտաբ ներկայացվող պատահարների վերաբերյալ հաղորդումների հաշվառման մասին հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 4-ի:

2. ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետին՝ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից ներկայացված հայտերի հիման վրա կազմակերպել սույն հրամանի 2-րդ հավելվածով հաստատված մատյանի տպագրությունը:

3. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել ՀՀ ոստիկանության շտաբի պետին:

4. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«28»__07__2022թ.
ք. Երևան

Հավելված 1
ՀՀ ոստիկանության պետի
«28» 07 2022թ.
թիվ 27 -Լ հրամանի

ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Հաղորդումների գրանցման կարգ) նկատմամբ Ներգերատեսչական հսկողություն իրականացնող ոստիկանության ստորաբաժանումները, Ներգերատեսչական հսկողության ձևերը, պարբերականությունը, արդյունքների ամփոփումը, հաշվետվությունը, Հաղորդումների գրանցման կարգի պահանջների կատարման նկատմամբ մոնիթորինգը:

2. Ներգերատեսչական հսկողության նպատակը հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ Հաղորդումների գրանցման կարգի միատեսակ ընկալման և ճիշտ կիրառման ապահովումն է, իրավակարգավորումների արդյունավետության բարձրացումը, հաղորդումներ ընդունելու, գրանցելու, հաշվառելու և ընթացք տալու իրավահարաբերություններում օրինականության խախտումների նախականխումը, կանխումը, հայտնաբերումը, ինչպես նաև քաղաքացիների և կազմակերպությունների՝ ոստիկանության ծառայողների գործողության կամ անգործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնումը:

2. ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3. Հաղորդումների գրանցման կարգի իրականացման նկատմամբ ընդհանուր Ներգերատեսչական հսկողություն իրականացնող ստորաբաժանումը ՀՀ ոստիկանության շտաբն է:

4. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումներում Հաղորդումների գրանցման կարգի իրականացման նկատմամբ Ներգերատեսչական հսկողություն իրականացնող ստորաբաժանումները ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների շտաբերն են:

5. Իրավասու ստորաբաժանումներում Հաղորդումների գրանցման կարգի իրականացման նկատմամբ Ներգերատեսչական հսկողություն իրականացնող ստորաբաժանումներն են Իրավասու ստորաբաժանումների շտաբային գործառույթներ ունեցող կազմվերլուծական ծառայությունները:

6. Հաղորդումների գրանցման կարգի օրինականության ապահովման համար ամենօրյա պատասխանատվություն կրում են Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների և Իրավասու ստորաբաժանումների պետերը (նրանց փոխարինող պաշտոնատար անձինք):

7. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումներում, ինչպես նաև Իրավասու ստորաբաժանումներում Ներգերատեսչական հսկողությունն իրականացվում է կիսամյակային պարբերականությամբ:

8. ՀՀ ոստիկանության շտաբը Ներգերատեսչական հսկողությունն իրականացնում է ՀՀ ոստիկանության պետի 2012 թվականի հունվարի 19-ի թիվ 150-Ա հրամանով նախատեսված համալիր-տեսչական, հսկողական և կազմակերպչական ստուգումների շրջանակում, կամ արտապլանային և ընտրողական կարգով, կամ հաշվետվություններ պահանջելու ձևերով:

3. ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

9. Ներգերատեսչական հսկողությունն իրականացվում է ստուգման ձևով: Ստուգումներն իրականացվում են անձնական դիտումների կամ ուսումնասիրությունների, վերլուծությունների, կիրառվող տեխնիկական միջոցների սարքինությունը ստուգելու, ձայնագրված հաղորդումներն ընտրողական կարգով լսելու, ոչ իրական հաղորդումներ ներկայացնելու և այդ առթիվ պահանջվող գործողությունները տեղում դիտարկելու, բացատրություններ ու պարզաբանումներ, ծառայողական փաստաթղթեր պահանջելու,

ոստիկանություն դիմած քաղաքացիների ու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցներ ունենալու եղանակներով:

10. Ներգերատեսչական հսկողության ընթացքում ստուգման ենթակա օբյեկտներն են.

1) Հաղորդումների գրանցման կարգի գրանցամատյանի վարման կարգը,

2) Հաղորդումների գրանցման կարգով նախատեսված որոշումներն ընդունելու ժամկետների և բովանդակության համապատասխանությունը նշված կարգի պահանջներին,

3) կտրոն-ծանուցագրեր տրամադրելու գործընթացի վիճակը, դրանց համադրումը և հաշվարկը գրանցամատյաններում առկա գրառումների հետ,

4) Աշխատանքային մատյանում կատարված գրառումների հիմնավորվածությունը,

5) Աշխատանքային մատյանում ամրագրված հանցագործությունների մասին վերացական բնույթի հաղորդումների օպերատիվ-հետախուզական ճանապարհով ստուգման ուղարկելու փաստը և արդյունքները,

6) հերթապահ մասերի հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ՀՀ ոստիկանության պետի 2014 թվականի հունիսի 20-ի թիվ 2121-Ա հրամանով հաստատված հերթապահի գրառումների մատյանի (Ձև 4) բովանդակության ընդհանուր համապատասխանությունն Աշխատանքային մատյանում և գրանցամատյանում առկա գրառումներին (ընտրողական կարգով),

7) պատահարների ստուգման արդյունքում կազմված զեկուցագրերի պատճառաբանվածությունը:

4. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

11. Ստուգման արդյունքում կազմվում է ստուգման ակտ, որում ամրագրվում են տեղեկություններ ստուգման փաստի, բովանդակության, ժամկետների, ինչպես նաև հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով տրված ցուցումների վերաբերյալ:

12. Ստուգման արդյունքում կազմված ակտի 2-րդ օրինակը տրամադրվում է տվյալ ստորաբաժանմանը:

13. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումներում, ինչպես նաև Իրավասու ստորաբաժանումներում

իրականացված ստուգման արդյունքներով կազմված ակտը զեկուցվում է ստուգումն իրականացրած ստորաբաժանման պետին: Ստուգման ակտը ստորագրում են ստուգումն իրականացրած շտաբի պետը կամ շտաբային գործառույթներ ունեցող կազմվերլուծական ծառայության պետը, իսկ եթե ստուգումն իրականացրած ստորաբաժանման պետի կողմից տրվել են թերությունների ու խախտումների վերացմանն ուղղված ցուցումներ, ապա նաև՝ վերջիններս:

14. Ստուգման ընթացքում հանցագործության կամ կարգապահական խախտման դեպքեր հայտնաբերելիս հետագա ընթացքը լուծվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կամ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

15. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի, մարզային վարչությունների, ինչպես նաև Իրավասու ստորաբաժանումների պետերը յուրաքանչյուր եռամսյակ՝ աճող պարբերականությամբ ամփոփում են ենթակա ստորաբաժանումների կողմից պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու աշխատանքները, հաստատում սույն հրամանի 4-րդ հավելվածով սահմանված հաշվետվությունը և մինչև հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը ներկայացնում ՀՀ ոստիկանության շտաբ:

5. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

16. Հանցագործությունների մասին վերացական բնույթի հաղորդումները գրանցվում են Աշխատանքային մատյանում: Աշխատանքային մատյանի ստեղծումը և վարումը հանցագործության մասին վերացական բնույթի հաղորդումները գրանցելու և դրանց ընթացք տալու գործընթացի օրինականության նկատմամբ Ներգերատեսչական հսկողություն իրականացնելու միջոց է:

17. Վերացական են հանցագործությունների մասին բոլոր այն հաղորդումները, որոնցում նշված փաստական տեղեկությունների անորոշության ու սահմանափակ լինելու պատճառով հնարավոր չէ փաստել այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

18. Հանցագործությունների մասին վերացական բնույթի հաղորդումները ենթակա են ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

19. Առանձին դեպքերում հանցագործության մասին հաղորդումը վերացական դիտելու կամ չդիտելու հարցով հսկող դատախազի հետ խորհրդակցելը նպատակահարմար է:

6. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

20. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների շտաբերը ստուգումներից հետո մինչև հաջորդ տարվա հունվարի 30-ը պարտավոր են իրականացնել Հաղորդումների գրանցման կարգի կիրառման մոնիթորինգ: Մոնիթորինգն իրականացվում է ամփոփելով և վերլուծելով հետևյալ տեղեկությունները.

1) ենթակա տարածքային ստորաբաժանումներում իրականացված ստուգումների արդյունքները,

2) քաղաքացիներից և կազմակերպություններից ՀՀ ոստիկանության շտաբի «Թեժ գծով» և այլ աղբյուրներից ստացված դիմումների և բողոքների քննարկման արդյունքները,

3) ՁԼՄ-ներից ոստիկանության տարածքային մարմինների գործունեության վերաբերյալ այն հրապարակումները, որոնք որևէ առնչություն ունեն Հաղորդումների գրանցման կարգի կիրառման հետ,

4) Հաղորդումների գրանցման կարգի խախտումների առիթով նշանակված ծառայողական քննության արդյունքները,

5) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում կատարված քննության արդյունքները,

6) Հաղորդումների գրանցման կարգի պահանջների կատարման նկատմամբ դատախազական ստուգման արդյունքներով տրված ցուցումները,

7) եզրափակիչ դատական ակտերը:

21. Ստուգման ակտերը և մոնիթորինգի արդյունքներով կազմված տեղեկանք-ամփոփագիրը պարզաբանման ենթակա հարցադրումների հետ միասին ՀՀ ոստիկանության շտաբ ուղարկվում են միայն այն դեպքերում, եթե.

1) ի հայտ է գալիս կազմակերպական և իրավամեկնաբանողական բնույթի միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն, որոնց ապահովումը դուրս է ՀՀ

ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների պետերի իրավասությունից,

2) առկա է Հաղորդումների գրանցման կարգի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալում, կամ Հաղորդումների գրանցման կարգի և գերատեսչական այլ իրավական ակտերի դրույթների միջև պարզվել է հակասություն,

3) առկա է Հաղորդումների գրանցման կարգի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման անհրաժեշտություն, որոնք ունեն համընդհանուր նշանակություն:

Հավելված 2

ՀՀ ոստիկանության պետի
«28» 07 2022թ.
թիվ 27 -Լ հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԱՏՅԱՆ Ն_____

Հանցագործությունների մասին վերացական բնույթի հաղորդումների գրանցման

_____

ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ստորաբաժանման կամ տարածքային մարմնի անվանումը

Սկսված է «_____» _____ 202 թ.

Ավարտված է «_____» _____ 202 թ.

էջերի քանակը _____

Պահպանման ժամկետը _____

Հիմքը՝ _____

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հանցագործությունների մասին վերացական բնույթի հաղորդումները ստուգվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով:

Հ/h	Հանցագործությունների մասին վերացական բնույթի հաղորդումը գրանցելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն	Հաղորդումը ներկայացնող անձի տվյալները (Ա.Ա.Հ., իրավաբանական անձի անվանում, հասցե, հեռախոսահամար)	Հակիրճ նկարագրությունը	Ում է զեկուցվել (Ա.Ա., պաշտոն)	Ում է հանձնարարվել ՕՀ միջոցառման կատարումը (Ա.Ա., պաշտոն)	ՕՀՄ ստուգման արդյունքները, գրանցամատյանում հաղորդումը գրանցելու դեպքում հերթական հաշվառման համարը, օրը, ամիսը, տարեթիվը	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8

Հավելված 3
ՀՀ ոստիկանության պետի «28» 07 2022թ. թիվ 27-Լ հրամանի

Տ Ե Ղ Ե Կ Ու Թ Յ Ու Ն Ն Ե Ր

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ, ԴՐԱՆՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ, ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԵՐԱԴԱՍ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ, ՀՍԿՈՂ ԴԱՏԱԽԱԶԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ) ՄԱՍԻՆ

ՀՀ Կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշմամբ հաստատված հավելված 3
Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգի Ձև 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____

Հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելու վերաբերյալ

«_____»_____201 թ. քաղաք (համայնք)

_____

ժամը՝ ___ ___ րոպե

Ես՝ _____

(ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ստորաբաժանման կամ տարածքային մարմնի անվանումը)

_____

(ծառայողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

ընդունեցի հաղորդում քաղաքացի՝

_____

(անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան թիվը, բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը)

_____

_____

(էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)

_____

(ծառայողական հասցեն, պաշտոնը)

_____

անձը հաստատող փաստաթուղթ (սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

_____

հաղորդում տվողի առձգությունն իրավախոտմանը կամ պատահարին և իրազեկության աստիճանը

Քաղաքացի _____ը նախազգուշացվել է սուտ մատնության համար ՀՀ քր.օր. 476-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին

_____

(ստորագրությունը)

Հանցագործության դեպքի նկարագրությունը, ենթադրյալ հանցանք կատարված անձի վերաբերյալ տվյալները (հայտնի լինելու դեպքում)

_____

_____

(օրը, ամիսը, տարին, ժամը, վայրը)

_____

_____

Հաղորդումն ընդունեց

_____

(ծառայողի ստորագրությունը)

«____» _____ 202 թ.

ՀՀ ոստիկանության ծառայողի կողմից ապօրինաբար հաղորդում չընդունելն առաջացնում է կարգապահական կամ քրեական պատասխանատվություն:

---

1. Հաղորդումները, անկախ իրավախախտումների կատարման կամ պատահարների առաջացման վայրից և ժամանակից, ինչպես նաև դրանցում պարունակվող տեղեկությունների ամբողջականությունից, պարտադիր ենթակա են ընդունման և գրանցման ոստիկանության տարածքային մարմիններում և հաղորդում ընդունելու իրավասու այլ ստորաբաժանումներում (ՀՀ կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշման հավելված 3-ով սահմանված կարգի 5-րդ կետ):
2. Տարածքային մարմինների հերթապահ մասերն ապահովում են հաղորդումների շուրջօրյա ընդունումն ու գրանցումը (նույն կարգի 8-րդ կետ):
3. Հաղորդումները գրանցվում են հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների գրանցամատյանում: Հաղորդմանը տրվում է հերթական հաշվառման համար (նույն կարգի 18-րդ և 21-րդ կետեր):
4. Դիմողից, նրա ներկայացուցչից անմիջապես ոստիկանության իրավասու ստորաբաժանումում կամ տարածքային մարմնում հանցագործության մասին հաղորդում ընդունելիս՝ հաղորդում ընդունող ոստիկանության իրավասու ծառայողը պարտավոր է վերջիններիս անհապաղ տրամադրել կտրոն-ծանուցագիր, իսկ էլեկտրոնային եղանակով հանցագործության մասին հաղորդում ստանալու դեպքում հաղորդում ներկայացնողին կտրոն-ծանուցագիրն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով (նույն կարգի 33-րդ կետ):
5. Պատահարի մասին հաղորդումները ստուգվում և որոշումներն ընդունվում են պատահարի վերաբերյալ հաղորդումը գրանցվելուց հետո 5-օրյա ժամկետում (նույն կարգի 56-րդ կետ):

Ներգերատեսչական հսկողություն իրականացնող վերադաս ստորաբաժանում՝

ՀՀ ոստիկանության շտաբ, «Թեժ գիծ» ծառայություն

010-54-69-12, 010-54-69-14

Հսկող դատախազի Ա.Ա.Հ. և աշխատանքային հեռախոսահամարը՝

_____

(լրացնել ձեռագիր)

Հավելված 4
ՀՀ ոստիկանության պետի
«28» 07 2022թ.
թիվ 27-Լ հրամանի

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

(ստորաբաժանման անվանումը)

(պաշտոնը, կոչումը)

(ստորագրություն, Ա.Ա.Հ)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հաշվետու փարվա՝ եռամսյակի, կիսամյակի, իննամսյակի և փարեկան գործունեության արդյունքներով)

ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստորաբաժանման անվանումը	Պատահարների վերաբերյալ ստացված հաղորդումների քանակը	Պատահարների վերաբերյալ ստացված հաղորդումներով				
		Ընթացք է տրվել ՀՀ ՔԴՕ սահմանված կարգով	Հարուցվել է վարչական վարույթ	Չեկուցագրով թողնվել է անհետևանք	Ուղարկվել է՝	
					Ոստիկանության այլ ստորաբաժանում	Այլ պետական մարմին
1.	2.	3.	4.	5.	6.	7.
ԸՆԴՀԱՆՈՒՐ						

Կատարող՝ ____________________
(ծառայողի պաշտոնը, կոչումը, ստորագրություն, Ա.Ա.Հ.)